Հավելված 1
ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2001 թվականի ապրիլի 13-ի №15 որոշման

«_____»
(բաշխիչ էլեկտրացանց)
բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզավորված գործունեություն իրականացնելու

Պայմանները

(Լիցենզիա No. _____, տրված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 200_ թ. _____ «____» No. ___որոշմամբ)

1. Լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացությունները

Սույն լիցենզիայի իմաստով՝

Արտադրող՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:

Արտահանող՝ Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:

Բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագիր և Բաժնետոմսերի ուղղակի վաճառքի պայմանագիր՝ այնպես, ինչպես սահմանված է «Հայասատանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածում:

Էլեկտրաէներգիայի (հզորության) բաշխիչ ցանց կամ Բաշխիչ ցանց՝ էլեկտրական էներգիայի բաշխման գծերի, ենթակայանների և այլ սարքավորումների միասնական համակարգ, որի միջոցով էլեկտրական էներգիան Հաղորդողից և (կամ) Արտադրողից հասցվում է Սպառողներին (Բաժանորդներին) և որի կառավարումն իրականացնում է Լիցենզավորված անձը (Բաշխողը):

Էլեկտրական էներգիայի հաղորդման ցանց կամ Հաղորդման ցանց՝ էլեկտրական էներգիայի հաղորդման գծերի, ենթակայանների և այլ սարքավորումների միասնական համակարգ, որի միջոցով էլեկտրական էներգիան (հզորությունը) Արտադրողից կամ Ներկրողից հասցվում է Բաշխողին և (կամ) Սպառողին (Բաժանորդին) և (կամ) տարանցվում երրորդ երկիր և որի կառավարումն իրականացնում է Հաղորդողը:

Էլեկտրական էներգիայի (հզորության) առուվաճառքի իրավունք ունեցող իրավաբանական անձ՝ իրավաբանական անձ, որին գործունեության լիցենզիայով տրված է էլեկտրական էներգիայի (հզորության) մեծածախ գնման և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց և (կամ) Սպառողներին (Բաժանորդներին) էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի իրավունք:

Էլեկտրական էներգիայի (հզորության) մատակարարման երկկողմ պայմանագիր կամ Երկկողմ պայմանագիր՝ էլեկտրական էներգիայի (հզորության) պահանջարկ ունեցող Սպառողի (Բաժանորդի) և Լիցենզավորված անձի միջև կնքված պայմանագիր, որով սահմանվում են էլեկտրական էներգիայի առաքման և վաճառքի պայմանները:

Էլեկտրական էներգիայի (հզորության) մատակարարման եռակողմ պայմանագիր կամ Եռակողմ պայմանագիր՝ էլեկտրական էներգիայի (հզորության) պահանջարկ ունեցող Սպառողի (Բաժանորդի), Ենթասպառողի (Ենթաբաժանորդի) և լիցենզավորված անձի միջև կնքված պայմանագիր, որով սահմանվում են էլեկտրական էներգիայի (հզորության) առաքման և վաճառքի, ինչպես նաև առաքման համար օգտագործվող՝ լիցենզավորված անձին չպատկանող էլեկտրական ցանցի շահագործման և պահպանման, այդ ցանցը տնօրինողի ծախսերի հատուցման պայմանները:

Լիցենզավորված անձ կամ Բաշխող՝ _____
ընկերության անվանումը

Լիցենզիա՝ Հանձնաժողովի կողմից _____
ընկերության անվանումը

տրված փաստաթուղթ, որը հավաստում է վերջինիս իրավունքը և պարտականությունը՝ սահմանված Սպասարկման տարածքում իրականացնելու էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման գործունեություն:

Հաղորդող՝ էլեկտրական էներգիայի Հաղորդման ցանցով էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով՝ էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին, որը գործում է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված լիազորությունների հիման վրա:

Ներդրումներ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումներ, որոնք ուղղված են Լիցենզավորված անձի օգտակար և օգտագործվող ակտիվների մեծացմանը:

Ներկրող՝ Հայաստանի Հանրապետություն էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:

Սակագնային մարժայի համաձայնագիր՝ «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայասատանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց» «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածին համապատասխան կնքված փաստաթուղթ:

Սակագնային մարժա կամ Բաշխման ծառայության սակագին՝ այնպես, ինչպես սահմանված է «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայասատանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց» «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածում:

Սպառող (Բաժանորդ)՝ Էլեկտրական էներգիայի (հզորության) սպառման պահանջարկ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, որն էլեկտրական էներգիայի (հզորության) մատակարարման երկկողմ կամ եռակողմ պայմանագիր է կնքել Լիցենզավորված անձի հետ:

Ենթասպառող (Ենթաբաժանորդ)՝ Էլեկտրական էներգիայի (հզորության) սպառման պահանջարկ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, որն էլեկտրական էներգիայի (հզորության) մատակարարման երկկողմ կամ եռակողմ պայմանագիր է կնքել Լիցենզավորված անձի հետ և որի էլեկտրական էներգիայի (հզորության) մատակարարումն իրականացվում է Սպառողի (Բաժանորդի) էլեկտրական ցանցից:

Սպասարկման տարածք՝ Հայաստանի Հանրապետության աշխարհագրական որոշակի տարածք (հավելված), որտեղ Լիցենզավորված անձին Լիցենզիայով տրվում է էլեկտրական էներգիայի (հզորության) Բաշխման գործունեություն իրականացնելու բացառիկ իրավունք:

Լիցենզավորված անձին վերաբերող կոնֆիդենցիալ տեղեկատվություն՝ նախատեսվող կորպորատիվ փոփոխությունների (օրինակ, միաձուլում, գնում և այլն) վերաբերյալ տեղեկատվություն, որի հրապարակումը կարող է ազդել Լիցենզավորված անձի ֆինանսական վիճակի վրա, առևտրային գաղտնիքներ կամ այլ տեղեկություններ, որոնց բացահայտումը կարող է վնաս հասցնել Լիցենզավորված անձին կամ նրա բաժնետերերին, ինչպես նաև Լիցենզավորված անձի Սպառողների (Բաժանորդների) մասին մասնավոր տեղեկատվություն: Հանձնաժողովին փաստաթղթեր ներկայացնելիս Լիցենզավորված անձը կարող է նշել այն բաժինները, որոնք պարունակում են կոնֆիդենցիալ տեղեկատվություն և խնդրել Հանձնաժողովին դրանց վերաբերվելու որպես կոնֆիդենցիալ տեղեկատվության: Հանձնաժողովն իրավասու է մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, ինչպես նաև ՀՀ կառավարության գործողությունները կամ անգործությունը (ներառյալ գույքի բռնագրավումը), որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Լիցենզիայի գործողության ժամկետը

2.1. Լիցենզիան ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցելու պահից:

2.2. Լիցենզիան տրվում է անժամկետ:

3. Լիցենզավորված գործունեության էությունը կազմող գործառույթները

3.1. Սպասարկման տարածքում Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է իրականացնել էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման գործունեության էությունը կազմող հետևյալ գործառույթները.

ա) Բաշխման ցանցի սպասարկում, շահագործում և բարելավում

բ) Բաշխման ցանցով էլեկտրական էներգիայի (հզորության) մատակարարում Սպառողներին (Բաժանորդներին).

գ) Սպասարկման տարածքում էլեկտրական էներգիայի (հզորության) պահանջարկը բավարարելու նպատակով Բաշխման ցանցի ընդլայնում, նոր սպառողների սպասարկում.

դ) Հայաստանի Հանրապետության Սպառողներին (Բաժանորդներին) էլեկտրական էներգիայի (հզորության) մատակարարման նպատակով Էլեկտրական էներգիայի (հզորության) առուվաճառքի իրավունք ունեցող Լիցենզավորված անձանցից էլեկտրական էներգիայի (հզորության) մեծածախ գնում.

ե) իր սեփականությունը հանդիսացող և (կամ) իր տնօրինության տակ գտնվող էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառք Սպառողներին (Բաժանորդներին).

զ) Էլեկտրական էներգիան հաշվառող առևտրային հաշվիչների տեղադրում և սպասարկում, այդ թվում՝ Սպառողների (Բաժանորդների) տարածքում.

է) Բաշխման ցանցի օպերատիվ կառավարում և կարգավարում.

ը) էլեկտրական էներգիայի մատակարարման Երկկողմ կամ Եռակողմ պայմանագրերի կնքում, մատակարարված (վաճառված) էլեկտրական էներգիայի (հզորության) դիմաց գումարների գանձում.

3.2. Սպասարկման տարածքում Լիցենզավորված անձին տրվում է 3.1 կետի ա), բ), գ), ե), զ), է) ենթակետերով ամրագրված գործառույթներն իրականացնելու բացառիկ իրավունք՝ սույն լիցենզիայի գործողության ժամանակահատվածում, բացառությամբ «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47 հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի:

3.3. Լիցենզավորված անձին 5 տարի ժամկետով տրվում է Լիցենզիայի 3.1 կետի դ), ը) ենթակետերով ամրագրված գործառույթներն իրականացնելու բացառիկ իրավունք, բացառությամբ «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47 հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի: Հետագա տարիներին նշված գործառույթները կարող են իրականացվել մրցակցային պայմաններում՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող էլեկտրաէներգետիկական շուկայի կանոնների համաձայն:

3.4 Լիցենզավորված անձն իրավունք ունի իրականացնել տեխնիկական միջոցառումներ՝ ապահովելու Սպառողների (Բաժանորդների) անմիջական միացումն իր սեփականությունը հանդիսացող Բաշխման ցանցին: Նման միջոցառումների նպատակահարմարությունը և տնտեսական արդյունավետությունը գնահատվում է Հանձնաժողովի կողմից և դրական որոշման դեպքում այդ միջոցառումներն իրականացվում են Հանձնաժողովի հետ համաձայնեցված կարգով, իսկ հիմնավորված և անհրաժեշտ ծախսերը հաշվի են առնվում Սակագնային մարժայում:

3.5. Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք կամ պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարել, զիջել, գրավ դնել կամ փոխանցել մեկ այլ անձի՝ առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու և Լիցենզիայում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու:

3.6. Լիցենզավորված գործունեություն իրականացնելու, էլեկտրաէներգիայի կորուստները կանխելու համար Լիցենզավորված անձն իրավունք ունի ազատ մուտք գործել 110 -220կՎ լարման այն ենթակայանները, որոնցից սնվում են Սպառողները (Բաժանորդները) և (կամ) Լիցենզավորված անձը և հսկողություն իրականացնել, կիրառել արդյունավետ ու ողջամիտ տեխնիկական միջոցառումներ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված օրինակելի պայմանագրերով կամ պարտադիր պայմաններով և ¥կամ¤ շուկայի կանոններով սահմանված կարգով:

4. Լիցենզավորված գործունեության պայմանները

4.1. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Լիցենզիայի, Բաժնետոմսերի առուվաճառքի և Բաժնետոմսերի ուղղակի վաճառքի պայմանագրերի, Հանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի, ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

4.2 Լիցենզավորված անձը Հանձնաժողովի հետ համաձայնեցված կարգով պարտավոր է հայտատուներին տրամադրել Բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմաններ և սահմանված կարգով ու պայմանագրին համապատասխան հետագայում ապահովել նրանց էլեկտրամատակարարումը:

4.3 Սույն լիցենզիայի 3.3 կետի գերակայությամբ, Լիցենզավորված անձը տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված Բաշխման գործունեության սակագնով (սակագներով) ապահովել էլեկտրական էներգիայի (հզորության) առուվաճառքի իրավունք ունեցող այլ անձանց էլեկտրական էներգիայի (հզորության) մուտքը Բաշխման ցանց՝ համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի և Հանձնաժողովի կողմից հաստատվող էլեկտրաէներգետիկական շուկայի կանոնների:

4.4 Լիցենզավորված անձն իր գործունեությունն իրականացնելիս, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, պարտավոր է ապահովել քաղաքացիների, սպսարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

4.5 Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայատեր կամ միավորվել լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

Առանց Հանձնաժողովի թույլտվության արգելվում է լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, գործող էներգատեղակայանքներ և գծեր) վաճառել կամ գույքի նկատմամբ իրավունքները մեկ այլ կերպ փոխանցել այլ անձի:

4.6 Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել Սպասարկման տարածքում գտնվող Սպառողներին (Բաժանորդներին) մատակարարվող էլեկտրական էներգիայի (հզորության) առևտրային հաշվառքի սարքերի սպասարկումը և շահագործումը՝ ներառյալ ստուգաչափումը:

4.7 Լիցենզավորված անձի և էլեկտրական էներգիայի բնագավառում գործունեության լիցենզիա ստացած այլ անձանց միջև կնքվող էլեկտրական էներգիայի (հզորության) մատակարարման, այդ թվում նաև էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի պայմանագրերը, ինչպես նաև էլեկտրաէներգետիկայի ոլորտում գործունեության լիցենզիա ունեցող անձանց բաշխման ծառայություն մատուցելու կամ այդ անձանց կողմից Լիցենզավորված անձին ծառայություններ մատուցելու պայմանագրերը, այդ թվում երկկողմ կամ բազմակողմ, պետք է համապատասխանեն Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերին:

4.8 Լիցենզավորված անձի և էլեկտրաէներգետիկայի ոլորտում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքվող մատակարարման, ինչպես նաև ծառայությունների մատուցման երկկողմ կամ բազմակողմ պայմանագրերը ենթակա են գրանցման Հանձնաժողովում:

4.9 Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Կենտրոնական կարգավարական ծառայության օպերատիվ հրահանգներն ու կարգադրությունները՝ ըստ գործող կարգի և նրա հետ կնքված պայմանագրի դրույթների:

4.10 Լիցենզավորված անձը պարտավոր է աջակցել Համակարգի օպերատորի (Կենտրոնական կարգավարական ծառայության) կողմից իրականացվող էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող՝ Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների զննումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև աջակցել իր տնօրինության տակ գտնվող այլ անձանց սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների զննման իրականացմանը:

4.11 «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Լիցենզիայի պայմանների կատարման ապահովման համար, Լիցենզավորված անձը պետք է կատարի ներդրումներ: Մասնավորապես Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ժամանակացույցին համապատասխան Լիցենզավորված անձը Հանձնաժողովի համաձայնեցմանն է ներկայացնում Բաշխման ցանցի վերականգնման, վերակառուցման, արդիականացման և ընդլայնման,

լիցենզավորված գործունեությունը տեխնիկական կանոնակարգերին համապատասխանեցման, ինչպես նաև Սպառողներին և Բաժանորդներին մատուցվող ծառայությունների որակի պահպանման և բարելավման կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերը համապատասխան հիմնավորումներով: Հանձնաժողովը ուսումնասիրում է ներկայացված ծրագրերը, այդ թվում նրանցում նախատեսված ներդրումների անհրաժեշտությունը և արդյունավետությունը, նրանց ազդեցությունը ապագա սակագնային մարժայի վրա՝ դրանց լրիվ կամ մասնակի Սակագնային մարժայում ներառելու վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

Հանձնաժողովի համապատասխան որոշումով թույլատրված ներդրումների շրջանակում, փաստացի կատարված ներդրումները ներ են առնվում Սակագնային մարժայում Լիցենզիայի 4.21 կետով ամրագրված մեթոդաբանությամբ:

Ցանկացած պահի Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը կարող են տալ առաջարկություններ Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ, որոնք ուժի մեջ կմտնեն միայն Հանձնաժողովի և Լիցենզավորված անձի փոխադարձ համաձայնությամբ, Հանձնաժողովի համապատասխան որոշումից հետո:

4.12 Լիցենզավորված անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգի և ժամանակացույցի համաձայն, Հանձնաժողով է ներկայացնում հաջորդ տարվա էլեկտրական էներգիայի բեռի գրաֆիկի, սպառման ծավալների և տեխնոլոգիական կորուստների կանխատեսումները:

4.13 Լիցենզավորված անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, Հանձնաժողով է ներկայացնում ճշգրիտ տեղեկատվություն և հաշվետվություններ լիցենզավորված գործունեության մասին:

4.14 Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման պահանջներին:

4.15 Լիցենզավորված անձը պարտավոր է վարել լիցենզավորված գործունեության առանձացված հաշվապահական հաշվառում:

4.16 Յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 30-ը, Լիցենզավորված անձը պարտավոր է հանրապետական մամուլում հրապարակել նախորդ տարվա իր ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը՝ համաձայն

Հանձնաժողովի կողմից սահմանված ձևերի: Հրապարակված հաշվետվությունները չպետք է պարունակեն պետական և ծառայողական գաղտնիքներ, ինչպես նաև Լիցենզավորված անձին վերաբերող որևէ գաղտնի տեղեկատվություն, որի գաղտնիությունը հաստատվել է Հանձնաժողովի կողմից:

4.17 Լիցենզավորված անձի կողմից սարքերի, սարքավորումների, ապրանքների ձեռքբերման, նրան ծառայությունների մատուցման գործարքները պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայասատանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց» «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջները՝ տեղական (Հայաստանի Հանրապետությունում գործող) կազմակերպություններին առաջնահերթության իրավունք տալու մասին, պայմանով, որ նրանց կողմից վաճառվող սարքերը, սարքավորումները, ապրանքները և մատուցվող ծառայությունները ունեն մրցակցային որակ և մրցակցային գներ:

4.18 Մրցութային կարգով գնումներ կատարելիս և (կամ) ծառայություններ մատուցող սուբյեկտների ընտրություն իրականացնելիս Լիցենզավորված անձը մրցույթի պայմանները նախապես համաձայնեցնում է Հանձնաժողովի հետ, եթե գնման կամ ծառայության մատուցման արժեքը գերազանցում է 50000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլարին համարժեք դրամը:

4.19 Լիցենզավորված անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

4.20 Լիցենզավորված անձի գնած և վաճառած էլեկտրական էներգիայի (հզորության) սակագները, ինչպես նաև Լիցենզավորված անձի կողմից իրականացվող էլեկտրաէներգիայի բաշխման սակագինը սահմանում է Հանձնաժողովը՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

4.21 Լիցենզավորված անձի Սակագնային մարժան կամ Բաշխման ծառայության սակագինը սահմանվում է համաձայն Սակագնային մարժայի համաձայնագրի, որի հիմնական դրույթները որպես Լիցենզիայի պայմաններ ամրագրված են 4.22 կետում:

4.22 Լիցենզիայի ուժի մեջ մտնելուց սկսած մինչև 2004 թվականի հունվարի 1-ը Լիցենզավորված անձի համար կգործի ԱՄՆ արժույթով արտահայտված մինչև–Լիցենզիան–ուժի–մեջ–մտնելը–գործող–մարժան չգերազանցող–անփոփոխ սակագնային մարժա, որն առանց ԱԱՀ-ի (ավելացված արժեքի հարկի) մեկ կՎտժ-ի դիմաց կկազմի 1.35 ԱՄՆ ցենտին համարժեք դրամ:

Հետագա տարիներին՝ սկսած 2004 թվականի հունվարի 1-ից, Լիցենզավորված անձի համար Սակագնային մարժան կհաշվարկվի Հանձնաժողովի սահմանած մեթոդաբանությամբ, որի հիմքում դրված է Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը, այսինքն՝

Անհրաժեշտ հասույթ = Շահագործման և պահպանման ծախսեր +
+ Մաշվածք + Գնված էլեկտրաէներգիայի արժեք + Հարկեր +
+ Անհուսալի դեբիտորական պարտքեր + Թույլատրելի զուտ շահույթ,
որտեղ՝

Շահագործման և պահպանման ծախսերը կընդգրկեն Հանձնաժողովի կողմից թույլատրված տեխնիկական սպասարկման և նորոգման, շահագործման համար անհրաժեշտ նյութերի ծախսերը, աշխատավարձը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները, վարչական, կառավարման, իրացման և ընդհանուր բնույթի այլ ծախսեր:

Մաշվածքը կհաշվարկվի մրցույթի արդյունքում ձևավորված Լիցենզավորված անձի հիմնական ակտիվների արժեքի և հետագա ներդրումների գումարից՝ գծային եղանակով, ելնելով ակտիվների կյանքի տևողությունից: Լիցենզավորված անձի սեփականաշնորհման պահին ձևավորված ակտիվները պետք է ամորտիզացվեն տարեկան միջին կշռութային 5%-ի չափով:

Գնված էլեկտրաէներգիայի արժեքը կորոշվի հետևյալ բանաձևով.

Գնված էլեկտրաէներգիայի արժեք = [Իրացված էլեկտրաէներգիայի քանակություն : (1- Հանձնաժողովի կողմից թույլատրված կորուստների նորմ)] x Էլեկտրաէներգիայի գնման միջին կշռութային սակագին:

Հարկերը (բացառությամբ ԱԱՀ-ի) կհաշվարկվեն ՀՀ հարկային օրենսդրության համաձայն՝ հիմք ընդունելով սակագնային մարժայի հաշվարկում ընդունված հասույթը և ծախսերը:

Անհուսալի դեբիտորական պարտքերը, որոնք իրենցից ներկայացնում են Լիցենզավորված անձի կողմից Սպառողներին (Բաժանորդներին) առաքված, սակայն չվճարված էլեկտրաէներգիայի արժեքը կներառվեն անհրաժեշտ հասույթի կազմում, բայց ոչ ավել քան առաքված էլեկտրաէներգիայի արժեքի 2%-ի չափով:

Թույլատրելի զուտ շահույթը կորոշվի հետևյալ բանաձևով.Թույլատրելի զուտ շահույթ = Շահույթի հաշվարկման բազա x Ակտիվների շահութաբերության նորմա = [Լիցենզավորված անձի հիմնական միջոցների սկզբնական հաշվեկշռային արժեք + Փակման օրից մինչ սակագնային մարժայի վերանայման պահը օգտակար և օգտագործվող հիմնական

ակտիվներում կուտակված ներդրումներ + Հանձնաժողովի կողմից ընդունված անհրաժեշտ շրջանառու կապիտալ - Կուտակված մաշվածք] x Ակտիվների շահութաբերության նորմա:

Լիցենզավորված անձի հիմնական միջոցների սկզբնական հաշվեկշռային արժեքը կհաշվարկվի որպես մրցույթի արդյունքում ձևավորված բաժնետոմսերի 100%-ի արժեքի և, համաձայն Բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագրի, Լիցենզավորված անձին փոխանցված պարտավորությունների գումար:

Սակագնային մարժան կորոշվի հետևյալ բանաձևով.

Սակագնային մարժա = (Անհրաժեշտ հասույթ : Իրացված էլեկտրաէներգիայի քանակություն) - Էլեկտրաէներգիայի գնման միջին կշռութային սակագին:

2004-2008թթ. ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարում Հանձնաժողովը կընդունի ակտիվների շահութաբերության 16,0% հաշվարկային նորմ՝ շահույթի հաշվարկման բազայի նկատմամբ:

Հետագա տարիների համար՝ սկսած 2009 թվականից, ակտիվների շահութաբերության նորմը կսահմանվի Հանձնաժողովի կողմից՝ ելնելով Հայաստանում ռիսկի նույն մակարդակով գործող արդյունաբերական ընկերությունների շահութաբերության վերլուծությունից՝ հաշվի առնելով, որ Լիցենզավորված անձը պետք է հնարավորություն ունենա ներգրավել նոր կապիտալ:

Լիցենզավորված անձին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագների Հանձնաժողովի կողմից փոփոխության դեպքում, համապատասխան փոփոխությունների կենթարկվեն՝

- 2001-2003 թվականների ընթացքում՝ միայն Սպառողներին էլեկտրաէներգիայի վաճառքի մանրածախ սակագները, համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայասատանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց» «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի այդ ժամանակահատվածում ապահովելով անփոփոխ սակագնային մարժա.
- 2004 թվականից սկսած՝ ինչպես Սպառողներին էլեկտրաէներգիայի վաճառքի մանրածախ սակագները, այնպես էլ Լիցենզավորված անձի սակագնային մարժան այն մասով, որը վերաբերում է Հանձնաժողովի կողմից թույլատրելի համարվող կորուստների արժեքին:

Հաշվի առնելով, որ.

- «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց» «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով 2001-2003թթ. ընթացքում պահպանվում է գործող (1.35 ԱՄՆ ցենտ/կՎտժ) սակագնային մարժան, որի հաշվարկում ընդգրկված է միայն անխուսափելի տեխնիկական կորուստների արժեքը,

- գոյություն ունեցող ոչ տեխնիկական բնույթի (առևտրային) կորուստների վերացման համար կպահանջվի որոշակի ժամանակ և ներդրումներ,
- «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով և մասնավորեցման պայմանագրով Լիցենզավորված անձը պարտավոր է մեծածախ շուկայում գնված էլեկտրական էներգիայի դիմաց ապահովել 100% վճարումներ, որի պայմաններում Լիցենզավորված անձը կկրի որոշակի վնասներ,

Սահմանվում է, որ 2001-2003թթ. սակագնային մարժայի հաշվարկում չներառված առևտրային կորուստներից առաջացած վնասները կհաշվարկվեն 2001-2002թթ. համար 4%-ի, իսկ 2003թ. համար 2%-ի չափով՝ գնված էլեկտրաէներգիայի արժեքից և կհատուցվի հետևյալ կարգով.

հաշվարկված վնասի արժեքը կհատուցվի սկսած 2004 թվականից ոչ ուշ, քան 4 տարվա ընթացքում, հաշվի առնելով դրամի ժամանակային աժրեքը՝ ներդրումային վարկերի միջին դրույքաչափին հավասար դիսկոնտի դրույքաչափով:

2001-2003թթ. օրենքով սահմանված անփոփոխ սակագնային մարժայի գործողության ժամանակահատվածում իրականացված ներդրումների թույլատրվող զուտ շահույթը կհաշվարկվի 16,0% դրույքաչափով և սկսած 2004 թվականից այն կհատուցվի ոչ ուշ, քան չորս տարվա ընթացքում հաշվի առնելով դրամի ժամանակային արժեքը դիսկոնտի 16% դրույքաչափով:

4.22.1 2004թ-ից սկսած յուրաքանչյուր օրացուցային տարում Լիցենզավորված անձի ակտիվների իրական շահութաբերության՝ սակագնային մարժայում հաստատված նորմայից շեղվելու դեպքում, եթե այդ շեղման չափը կազմում է 1,0 տոկոսային կետից ավելի, ապա լրացուցիչ շահույթի ¥վնասի¤ 50%-ը հանվում է ¥գումարվում է¤ հաջորդ օրացուցային տարվա անհրաժեշտ հասույթից ¥հասույթին¤: Շեղման չափը որոշելիս ընթացիկ տարվա շեղումը անտեսվում է:

Լիցենզավորված անձի շահագործման և պահպանման ծախսերի, էլեկտրաէներգիայի կորուստների և անհուսալի դեբիտորական պարտքերի՝ սակագնային մարժայի հաշվարկում նախատեսված չափերին գերազանցելու պատճառով առաջացած շահույթի նվազումը հետագայում փոխհատուցման ենթակա չէ:

4.22.2 Սակագները հաշվարկվում են ՀՀ պետական բյուջեի հիմքում դրված ԱՄՆ դոլարի և ՀՀ դրամի տվյալ ժամանակաշրջանի հաշվարկային միջին փոխարժեքի հիման վրա և սահմանվում են ՀՀ դրամով: Եթե ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական տվյալներով փաստացի միջին փոխարժեքը շեղվում է հաշվարկայինից, ապա կարող է կատարվել սակագների և Սակագնային մարժայի ճշգրտում, բայց ոչ հաճախ, քան 6 ամիսը մեկ:

2001-2003թթ. կատարվում է դրամով արտահայտված սակագնային մարժայի ճշգրտում այնպես, որ տարվա կտրվածքով պահպանվի օրենքով սահմանված 1.35 ԱՄՆ ցենտ/կՎտժ մարժայի միջին կշռութային մեծությունը,

2004թ. սկսած փոխարժեքի փոփոխությունը հաշվի կառնվի միայն սակագնային մարժայի հաշվարկում ներառված արտասահմանյան տարադրամով կատարված ծախսերի և շահույթի մասով: ՀՀ դրամով կատարվող ծախսերի փոփոխությունը կապված ներքին շուկայում գների փոփոխման հետ հաշվի կառնվի սակագների վերանայման համար սահմանված կարգով:

Փոխարժեքի տատանումների պատճառով Լիցենզավորված անձի մոտ առաջացած վնասը (շահույթը) հաշվի կառնվի 4.22.1 կետով սահմանված կարգով:

4.23 Լիցենզավորված անձը պարտավոր է էլեկտրական էներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրերում ամրագրված ժամկետներում ապահովել իր կողմից գնված էլեկտրական էներգիայի (հզորության), իրեն մատուցած ծառայությունների և կատարած աշխատանքների դիմաց 100 տոկոս վճարումները:

4.24 Լիցենզիան ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը 18 ամսվա ընթացքում Լիցենզավորված անձը Հանձնաժողով պետք է ներկայացնի անվտանգության և բնապահպանության նորմերի պահանջների կատարմանն ուղղված միջոցառումների ծրագրեր: Հանձնաժողովի կողմից հաստատված ծրագրերի իրականացման ընթացքում դրանցում ներառված տեխնիկական կանոնակարգերով սահմանված նորմերի պահանջներից շեղումները չեն համարվում այդ նորմերի խախտումներ՝ համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ կետի:

4.25 Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել սույն Լիցենզիայի կամ «Բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագրի»պայմանների խախտումների:

4.26 Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել Սպառողների (Բաժանորդների) անընդհատ—և—հուսալի էլեկտրամատակարարումը՝ համաձայն Լիցենզիայի 4.29 և 4.31 կետերի պահանջների,

բացառությամբ այն դեպքերի, երբ էլեկտրամատակարարման սահմանափակումները անխուսափելի են, այնպես, ինչպես դա ձևակերպված է Լիցենզիայի 4.36 կետում:

4.27 Պլանային, արտապլանային նորոգումներով և չվճարումներով պայմանավորված Սպառողի (Բաժանորդի) հոսանքազրկումները, ինչպես նաև ցանկացած հոսանքազրկումից հետո էլեկտրական էներգիայի մատակարարման վերականգնումը Լիցենզավորված անձը իրականացնում է Հանձնաժողովի կողմից հաստատված կարգի համաձայն:

4.28 Լիցենզավորված անձի և Սպառողների (Բաժանորդների) փոխհարաբերությունները կարգավորվում են մատակարարման պայմանագրերով, որոնց օրինակելի ձևերը սահմանում է Հանձնաժողովը, «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով», օրենքներով և այլ իրավական ակտերով:

4.29 Հանձնաժողովը Լիցենզավորված անձի կողմից Սպառողների (Բաժանորդների) սպասարկման որակը գնահատում է մեկ տարվա կտրվածքով՝ նրա և զարգացած երկրներում էլեկտրական էներգիայի բաշխման գործունեություն իրականացնող ընկերությունների՝ ստորև նշված ցուցանիշների վերլուծության և համեմատության հիման վրա.

ա) մեկ Սպառողի (Բաժանորդի) հոսանքազրկումների քանակը և տևողությունը՝ ըստ ստորև բերված պատճառների*.

- պլանային անջատումներ՝ պլանային վերանորոգման, բարելավման կամ սարքավորումների փոխարինման պատճառով.

- արտապլանային անջատումներ՝ կապված վթարների հետևանքների վերացման նպատակով կատարված նորոգումների կամ սարքավորումների փոխարինման հետ, որ դասակարգված են ըստ պատճառների (սարքավորումների խափանումներ, բնական պատճառներ, բարբարոսական գործողություններ կամ այլ մարդկային գործոնի ազդեցություն, աշխատողների սխալներ).

- անջատումներ՝ վճարումները չկատարելու պատճառով.

---

* 4.29 П»п3 ЗЩілпбн СбліЭщі×сПбхЩ ї СіЩіснбхЩ їЙ»ППсіПіЭ їЭ»с•3іЫ3 ЩіпіПісісЩіЭ 1 сбе»3у ін»Й3 пЁбХбхГЫіЩμ NiNic»убхЩБ:

բ) հոսանքազրկված Սպառողների (Բաժանորդների) քանակը՝ Սպառողների և Բաժանորդների ընդհանուր քանակի նկատմամբ (արտահայտված տոկոսով).

գ) Սպառողների (Բաժանորդների) դիմում-բողոքների և հարցադրումների ընդհանուր քանակը՝ ըստ դրանք հարուցող պատճառների և Սպառողների (Բաժանորդների) խմբերի.

դ) մեկ Սպառողի (Բաժանորդի) հարցադրմանը և դիմում-բողոքին արձագանքելու միջին տևողությունը՝ ըստ Սպառողների խմբերի.

ե) թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման և հաճախականության շեղման դեպքերի ընդհանուր քանակը և տևողությունը.

զ) Բաշխման ցանցում անխուսափելի տեխնոլոգիական կորուստների մեծությունը.

է) Բաշխման ցանցում առևտրային կորուստների մեծությունը.

ը) Հաշվառքի սարքերի ճշտության թույլատրելի դասից դուրս ցուցմունքների գրանցման դեպքերի թիվը՝ դասակարգված ըստ հաշվիչների խափանումների և հաշվիչների կեղծման կասկածելի դեպքերի:

Վերը նշված ցուցանիշների մեծությունները հաշվարկելիս հաշվի չեն առնվում ֆորս-մաժորով պայմանավորված Սպառողների (Բաժանորդների) հոսանքազրկման և սպասարկման որակի անկման դեպքերը, ինչպես նաև սպասարկման հետ կապված այն դեպքերը, որոնք պայմանավորված են Լիցենզավորված անձի սեփականություն չհանդիսացող կամ նրա կողմից չկառավարվող սարքավորումներով կամ գործունեությամբ: Նման դեպքերի մասին Լիցենզավորված անձը հատուկ հաշվետվություն է ներկայացնում Հանձնաժողով:

4.30 4.29 կետում նշված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու և դասակարգելու նպատակով, Լիցենզավորված անձը, Լիցենզիան ուժի մեջ մտնելուց հետո 12 ամսվա ընթացքում պետք է իրականացնի կազմակերպական և տեխնիկական բնույթի միջոցառումներ՝ ներդնելով նաև գրանցող (հիշող) սարքերի համակարգ:

~~4.31 Լիցենզիան ուժի մեջ մտնելուց առավելագույնը 18 ամիս հետո Լիցենզավորված անձը Հանձնաժողով պետք է ներկայացնի Լիցենզիայի~~

4.29 կետում նշված ցուցանիշների փաստացի մեծությունների մասին հաշվետվություն՝ նախորդ 12 ամիսների կտրվածքով, ինչպես նաև այդ ցուցանիշների բարելավման և զարգացած երկրների ցուցանիշների մակարդակին հասցնելու համար անհրաժեշտ միջոցառումների ծրագիրն ու ժամանակացույցը, որոնք Լիցենզավորված անձի մասնակցությամբ քննարկելուց հետո Հանձնաժողովը Լիցենզիայի 4.29 կետում նշված ցուցանիշների կանխատեսվող մեծություններն ըստ տարիների ամրագրում է համապատասխան որոշմամբ:

4.31 Լիցենզիան ուժի մեջ մտնելուց առավելագույնը 18 ամսվա ընթացքում Լիցենզավորված անձը Հանձնաժողով պետք է ներկայացնի Լիցենզիայի 4.29 կետում նշված ցուցանիշների փաստացի մեծությունների մասին հաշվետվություն նախորդող 12 ամիսների կտրվածքով, ինչպես նաև այդ ցուցանիշների բարելավման և զարգացած երկրների նույն ցուցանիշների մակարդակին հասցնելու համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրերը՝ ներառյալ ներդրումային կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը որոշում է կայացնում համաձայն Լիցենզիայի 4.11 կետի ընթացակարգի և պահանջների, իսկ Լիցենզիայի 4.29 կետում նշված ցուցանիշների ծրագրայի մեծությունները ըստ տարիների հաստատվում են Հանձնաժողովի որոշմամբ: Ներդրումային ծրագրերում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել 4.11 կետում նշված կարգով:

4.32 Լիցենզավորված անձը պարտավոր է իր տարածքային ստորաբաժանումներում ունենալ շուրջօրյա հեռախոսակապ, որի միջոցով Սպառողները (Բաժանորդները) կարող են նրան տեղեկատվություն հաղորդել, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի մատակարարման անսպասելի դադարեցումների (անջատումների), լարման անթույլատրելի շեղումների, սնուցող գծերի և հաշվիչի վնասման կամ վնասման վտանգի և այլնի մասին, հարցադրումներ ուղղել կամ բողոքել, շնորհակալություն հայտնել և այլն, ինչպես նաև Լիցենզավորված անձից տեղեկություններ ստանալ:

4.33 Լիցենզավորված անձը պարտավոր է էլեկտրաէներգիան կենցաղային սպառման համար օգտագործող Բաժանորդների (բնակչության) համապատասխան հայտերի հիման վրա տեղադրել էլեկտրաէներգիայի գիշերային սպառումը գրանցող հաշվիչներ, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին և Հանձնաժողովի հետ համաձայնեցված պայմաններին: Հաշվիչների ձեռքբերման և տեղադրման ծախսերը կրում են Բաժանորդները՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով Լիցենզավորված անձի կողմից հետագայում հատուցման պայմանով: Հատուցման ծախսերը համարվում են ներդրումներ և ներառվում սակագնային մարժայում:

4.34 Լիցենզավորված անձը տարվա ձմռան ժամանակաշրջանում (տվյալ տարվա դեկտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը) չի հոսանքազրկում էներգիան կենցաղային սպառման համար օգտագործող Բաժանորդին (բնակչությանը), եթե վերջինս դեկտեմբերի 1-ի դրությամբ սպառած էլեկտրաէներգիայի դիմաց պարտքեր չունի, նշված ժամանակաշրջանի յուրաքանչյուր ամիս վճարել է սպառած էլեկտրաէներգիայի արժեքի առնվազն 50%-ը և համաձայնել է Լիցենզավորված անձի հետ կազմել պարտքերի մարման ժամանակացույց:

4.35 Լիցենզավորված անձը իրավունք ունի և պարտավոր է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի գերակայությամբ Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահին իր սպասարկման տարածքում գտնվող և իր ցանցից սնվող Սպառողներին (Բաժանորդներին) բաշխել էլեկտրական էներգիա, ինչպես նաև նոր կամ վերակառուցվող սպառողներին առաջարկել բաշխման ցանցին կամ այլ սպառողների տեղակայանքներին միանալու տեխնիկական պայմաններ և ապահովել նրանց էներգամատակարարումը:

4.36 Լիցենզավորված անձը պարտավոր է անընդհատ և անխափան էլեկտրական էներգիա (հզորություն) մատակարարել առավել կարևոր նշանակություն ունեցող Սպառողներին, որոնց ցանկը մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 1-ը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց» «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի համաձայն

Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրավասու է անհրաժեշտ գործողություններ ձեռնարկել՝ հայտարարված արտակարգի իրավիճակներում էներգետիկայի բնագավառի գործունեության կանոնակարգման համար:

Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով նախապատրաստում է էլեկտրաէներգիայի մատակարարման անխուսափելի սահմանափակումների հանգեցնող իրավիճակների հաղթահարման գործողությունների ծրագրեր, որոնց նկատմամբ պահանջներն հետագայում ամրագրվելու են Լիցենզիայում:Այդ ծրագրերը ներառում են էներգամատակարարման առաջնահերթության Սպառողների (Բաժանորդների) ցանկը, որը յուրաքանչյուր հաջորդ

տարվա համար մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

էներգամատակարարման անխուսափելի սահմանափակումներ հանգեցնող իրավիճակներում Լիցենզավորված անձը պարտավոր է ճշտությամբ հետևել և կատարել հաստատված ծրագրերում նշված միջոցառումները և բոլոր Սպառողներին (Բաժանորդներին) տեղեկացնել էներգիայի մատակարարման սահմանափակումների չափերի և տևողության մասին:

4.37 Լիցենզավորված անձն իրավունք ունի դադարեցնել Սպառողի (Բաժանորդի) էլեկտրական էներգիայի մատակարարումը, եթե Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում վճարումները չեն կատարվում: Նախքան Սպառողի (Բաժանորդի) էներգամատակարարման դադարեցումը, Լիցենզավորված անձը պարտավոր է կիրառել Հանձնաժողովի սահմանած բոլոր նախազգուշական միջոցները: Սպառողների, բացառությամբ էներգիան կենցաղային սպառման համար օգտագործող Բաժանորդների (բնակչության), Լիցենզավորված անձը իրավունք ունի հաշվարկել և գանձել տույժ՝ մատակարարման պայմանագրով և էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով սահմանված կարգով և չափով: Լիցենզավորված անձը պարտավոր է մատակարարման և օգտագործման կանոններով, Հանձնաժողովի իրավական ակտերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքներով մատակարարել էլեկտրաէներգիա առավել կարևոր նշանակություն ունեցող Սպառողներին (Բաժանորդներին), որոնց ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը և որը յուրաքանչյուր տարի ներառվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքում:

4.38 Բաշխիչ ցանցին և (կամ) անմիջապես սպառողներին միացված ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի 110-220կՎ ենթակայանները, դրանցից մինչև սպառող ընկած հաղորդագծերը և այլ էներգատեղակայանքները Լիցենզավորված անձի հաշվեկշռին անցնելուց հետո կհամարվեն բաշխիչ ցանցի տարրեր: Դրանցից մատակարարում ստացող սպառողները կհամարվեն բաշխիչ ցանցի Սպառողներ (Բաժանորդներ):

5. Լիցենզավորված գործունեության վերահսկում

5.1 Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը՝ իր կողմից սահմանված կարգով:

Formatted: Bullets and Numbering

5.2 Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն իրավունք ունեն ազատ մուտք գործել Լիցենզավորված անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Լիցենզավորված անձը պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

5.3 Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, անվտանգության և հակահրդեհային կանոնները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

5.4 Յուրաքանչյուր տարին մեկ անգամ Հանձնաժողովը, տեղյակ պահելով Լիցենզավորված անձին, իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում, իր կողմից ընտրված անկախ փորձագիտական ընկերության կամ անկախ փորձագետների միջոցով կարող է իրականացնել Լիցենզավորված անձի կողմից Լիցենզիայի և Բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագրի պայմանների կատարման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների հավաստիության ստուգում: Նշված ուսումնասիրության և ստուգման ծախսերը ներառվում են Սակագնային մարժայում: Սակագնային մարժայով այդ ծախսերի փոխհատուցումը կարող է լիովին կամ մասնակիորեն չիրականացվել, եթե ուսումնասիրության կամ ստուգման արդյունքում հայտնաբերվել է, որ Լիցենզավորված անձը միտումնավոր կերպով սխալ տվյալներ է ներկայացրել Հանձնաժողով կամ Հանձնաժողովից տվյալներ է թաքցրել:

6.Տուգանքներ, Լիցենզիայի կասեցում և Լիցենզիայից զրկում

6.1. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը՝ իր կողմից սահմանված կարգով:

6.2. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջները և Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հանձնաժողովը իրավասու է կիրառել հետևյալ տույժերը.

ա) նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարականներ

բ) սակագների նվազեցում:
գ) Լիցենզիայի կասեցում
դ) Լիցենզիայից զրկում

Նշված տույժերի կիրառման կարգը սահմանում է Հանձնաժողովը, համաձայն «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42 հոդվածի:

6.3. Լիցենզավորված անձին Լիցենզիայից զրկելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածով և ՀՀ օրենսդրությամբ:

6.4. Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել նաև Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա: Նշված դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածով և ՀՀ օրենսդրությամբ: Մինչև Լիցենզիայի կասեցման կամ զրկման մասին Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում կայացնելը, Լիցենզավորված անձը պարտավոր է շարունակել գործունեությունը՝ համաձայն Լիցենզիայի պայմանների:

6.5 Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ սույն Լիցենզիայի 6.2 կետով սահմանված կարգով, եթե (և այնքանով, որքանով) նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս մաժորի հետևանք են:

7.Լիցենզիայի դրույթների և պայմանների փոփոխություն

~~7.1~~Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ:

7.1 Լիցենզավորված անձը ~~5~~ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովին ծանուցագրով տեղեկացնում է իր գտնվելու վայրի ~~(~~իրավաբանական հասցեի~~),~~ հիմնադիր փաստաթղթերի և բանկային հաշվեհամարների կրած փոփոխությունների մասին: Լիցենզիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Լիցենզավորված անձի դիմումի ընդունումը և քննարկումը կատարվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի փոփոխություններ կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող

փոփոխություններն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության օրենքների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայում կատարված փոփոխությունների հետևանքով առաջացած Լիցենզավորված անձի լրացուցիչ ծախսերը ներ են առնվում սակագնային մարժայում:

Formatted

8.Ծանուցում

8.1. Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ տեղեկատվությունները պետք է լինեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով կամ պատվիրված նամակով՝ պահանջելով ստացական: Ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն ուժի մեջ է համարվում ստացման պահից, իսկ եթե այն չի ստացվել հասցեատիրոջ մեղքով՝ հասցեատիրոջը հասցնելու փորձի պահից: Հաղորդագրությունը սկզբից եթե կարող է ուղարկվել էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով և ուժի մեջ է համարվում ստացման օրվանից, եթե ստացվել է մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

<u>Լիցենզավորված անձի փոստային կարգաթիվը</u> _____

Հասցեն _____

Անվանումը

Բանկային հաշվեհամարները

Տնօրենի (նախագահի) անունը, ազգանունը

Ի վկայություն սույնի, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է

_____

(ընկերության անվանումը)

_____

(իրավաբանական հասցեն)

Գրանցման ամսաթիվը

«____»_____ 200 թ.

Գրանցման համարը

No. _____

Հանձնաժողովի պատասխանատու անձ
_____

Հավելված

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

1. _____ վարչական տարածք